ՀՏԴ 37:398.1(479.243) Մանկավարժություն

ԱՐՑԱԽՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Էլլադա ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ *Հայրենասիրություն, հավատարմություն և նվիրվածություն, խիզախություն, ազատագրական հերոսամարտեր, խաղաղասիրություն, նվիրվածություն, հավաքական ուժ, արժանապատվություն, բարոյական ինքնագիտակցություն, ինքնատիպ համառություն , զորություն:*

Ключевые слова*: Патриотизм, верность и преданность, мужество, героическое освобождение, мир, целеустремленность, сила команды, достоинство, нравственное самосознание, своего рода упорства, силы.*

Keywords*: Patriotism, loyalty and devotion, courage, heroic liberation, peace, dedication, team strength, dignity, moral consciousness, a kind of perseverance, strength.*

ОТРАЖЕНИЕ ГЕРОИЧЕСКОЙ БОРЬБЫ АРЦАХСКОГО НАРОДА В ФОЛЬКЛОРЕ
Э. БАГДАСАРЯН

В Арцахском народном фольклоре отражается георическая борьба арцахского народа против врагов. В нем обсуждается злоба, предательство, алчность, насилие, жадность, бескультурье, лень и другие отрицательные человеческие качества, и наоборот. В реальных исторических, подлинных образах подчеркивается их подлинное человеческое призвание, патриотизм, героизм, трудолюбие, физическая сила, красота, гуманизм, великодушие, щедрость, чесность, справедливость, уважение к правам человека, к свободе и другие положительные качества.

PEOPLE'S HEROIC STRUGGLE OF ARTSAKH REFLECATION OF PEOPLE IN FOLKLORE
E. BAGDASARYAN

In Artsakh folklore reflects the heroic struggle of the Artsakh people against enemies. It condemns anger, betrayel, greed, violence, lack of culture, laziness and other negative human qualities, and vice versa, in the real historical, authentic images emphasizes their genuine human vocation: patriotism, heroism, hard work, physical strength, beauty, humanism, magnanimity, generosity, honesty, fairness, respect for human rights, for freedom and other positive qualities.

Արցախի ժողովրդական բանահյուսության մեջ արտացոլվում է Արցախի ժողովրդի հայրենասիրական պայքարը թշնամու դեմ: Դրա մեջ քննադատվում է չարությունը, դավաճանությունը, աչքածակությունը, բռնությունը, ժլատությունը, անկուլտուրականությունը, ծուլությունը և ուրիշ բացասական մարդկային որակներ և ընդհակառակը: Պատմական իրական կերպարների մեջ ընդգծվում են նրանց իրական մարդկային որակները՝ հայրենասիրություն, հերոսություն, աշխատասիրություն, ֆիզիկական ուժ, գեղեցկություն, մարդասիրություն, մեծահոգություն, առատաձեռնություն, մարդու իրավունքների և ազատությունների նկատմամբ հարգալից վերաբերմունք և այլ դրական որակներ:

Դարերի ընթացքում հայ ժողովրդի և նրա անբաժանելի մասը կազմող արցախցիների ստեղծած մշակութային արժեքները մինչև այժմ էլ հիացմունք են պատճառում ամենքին, իսկ ձեռագիր գանձերը ճանաչողական հարուստ նյութեր են ժողովրդի, նրա կենցաղի, ընտանեկան փոխհարաբերությունների, սովորությունների, ավանդույթների և հայրենասիրության մասին:

Բանահյուսությունում արտացոլվում են իսկական հայրենասիրության, մարդասիրության, հավատարմության և նվիրվածության, խիզախության ու աշխատասիրության օրինակներ և դաստիարակչական այնպիսի հատկանիշներ ու գաղափարներ , որոնք անհրաժեշտ են նաև ժամանակակից մարդու համար:

Արցախի ժողովուրդը հանգամանքների բերումով անընդմեջ ծանր ու հերոսական մարտեր է մղել օտար զավթիչների դեմ: Վաղեմի անցյալի ասորական զավթիչներին միջնադարում փոխարինում են պարսիկներն ու հռոմեացիները, արաբներն ու սելջուկները, մոնղոլները ու թուրք թաթարական մյուս ցեղերը և այլն:Արցախի ժողովուրդը հասակ է առնում իր հողի ու ջրի, իր գոյության ու ինքնության համար մղած ազատագրական հերոսամարտերում, հերոսամարտեր, որոնք նրա միջնադարյան պատմության կարևոր առանձնահատկությաուններից են:

Օտար զավթիչների հարատև հարձակումները և նրանց դեմ մղվող ազատագրական հերոսամարտերը տվյալ ժամանակաշրջանի քաղաքական տիրապետության դեմ ուղղված սոցիալական հզոր շարժումները, տեղահանություններն ու գերեվարումները ընդհանրապես հայ ժողովրդի բոլոր հատվածների պատմության այն առանձնահատկություններն են, պատմական այն հանգամանքները, որոնք իրենց անջնջելի կնիքն են դնում տվյալ ժամանակաշրջանի բանահյուսության վրա, պայմանավորում նրա բնույթն ու բովանդակությունը, նրա թեմաներն ու մոտիվները:

Եվ իսկապես, հայ բանահյուսության ուսումնասիրությունն անհերքելիորեն ցույց է տալիս, որ նրա իշխող և առաջատար թեմաներից մեկը պատմական տվյալ ժամանակաշրջանում մնում է հայրենիքի պաշտպանության թեման, որն իր գեղարվեստական մարմնավորումն է ստանում դեռևս 5-րդ դ.՝ ի դեմս, Արշակ և Շապուհ, և .Տարոնի պատերազմ բարձրարժեք վեպերգերի:Պատկերված իրադարձությունների աներկբա պատմականության հիման վրա նշված վիպերգերը բարձրացել են գեղարվեստական ընդհանրացման աստիճանի օտար զավթիչներից և օկուպանտներից հայրենիքի ինքնության պաշտպանությունը դարձնելով բնորոշ ոչ միայն 3-5-րդ դդ., այլև դրանց նախորդող ու հաջորդող ժամանակաշրջանների համար, ընդհուպ մինչև 10-րդ դար:

Սակայն արցախյան բանահյուսությունը միայն օտար զավթիչների դեմ մղված կռիվներն արտացոլող ստեղծագործություն չէ:Նրա մեջ, սկսած աշխատանքային երգերից, կենցաղային, ծիսական ու սիրային քնարերգությունից (հարսանեկան երգեր, սգո երգեր, գուսանական ժողովրդական տաղեր, սիրո երգեր և այլն), վերջացրած վիպական երգերով, հեքիաթներով, առակներով ու առածներով, հավասար ուժով հնչել է նաև սոցիալ-դասակարգային պայքարի թեման:

9-րդ դարի վերջերից սկսած կյանքն ու մարդը նոր թափով ներխուժում են արցախյան բանահյուսության մեջ և դառնում նրա հիմնական առարկան: Վիպական երգերում, սիրային լիրիկայում և առանձնապես գուսանական, ժողովրդական տաղերում ըստ ամենայնի գովերգվում են կյանքը, բնությունը և մարդու հոգեկան և հուզական աշխարհը իր բոլոր նրբերանգներով:

Միջնադարյան բանահյուսությունը 9-րդ դարի վերջերից սկսած տոգորվում է կենսասիրության հզոր շեշտերով:Այս բոլորը բանահյուսությունը դարձնում են ժամանակի հայերին, նրա բնորոշ առանձնահտկություններից մեկը՝ սկզբնավորվող վերածնության գեղարվեստական տարեգրությունը:

10-րդ դարում արցախի բանահյուսությունը թևակոխում է իր զարգացման նոր փուլ և թեև ոչ բազմակողմանիորեն, բայց արտացոլում է այն հիմնական տեղաշարժերը, որ տեղի են ունեցել սոցիալ-տնտեսական կյանքում, մարդկանց գիտակցության և հոգեբանության մեջ:

Բանահյուսության շատ նմուշներում, հեքիաթներում, ավանդույթներում, սովորույթներում, զրույցներում, հանելուկներում ուղղակի և անուղղակի կերպով արտացոլվում են Արցախի աշխատավորության աշխատասիրությունը, խաղաղասիրությունը, մարդասիրությունը, հյուրասիրության, այլասիրության, բարեգործության և այլ դրական հատկանիշներ, մաքառումներով լի կյանքի բնորոշ կողմերը, անցած դժվարին ուղին:

Արցախի երկրամասում լայն տարածում գտած բանահյուսության յուրաքանչյուր նմուշ մի պատմություն է, գեղարվեստական խոսքի ուժով պարուրված մի պատում:Արցախի հայերի մարդկային առաքինությունների, ուժի և զորության, ճարտարության, դժվար պայմաններում

կողմնորոշվելու ու հմտության մասին:Այդ է պատճառը, որ ժողովրդական բանահյուսության այս նմուշները ունեն ճանաչողական անգնահատելի արժեք; Դրանք պատկերացում են տալիս Արցախի ներկա և անցյալ իրավիճակի, մարդկային հարաբերությունների, տեղի բնակիչների ազգային կազմի, ապրելավայրերի, տարածքի և նրանց կյանքի բազմաթիվ այլ առանձնահատկությունների մասին:

Բարոյական դաստիարակության մեջ կարևոր տեղ է գրավում հայրենասիրության դաստիարակությունը: Հայրենասիրական համոզմունքներն արտահայտվում են ազգային, նյութական և հոգևոր արժեքների նկատմամբ տածած զգացմունքների, վերաբերմունքի մեջ;Այդ ամենից ելնելով վաղ տարիքից երեխաների մեջ պետք է համոզմունք դաարձնել այն գաղափարը, որ մարդը մարդ է իր հայրենիքով, որ հարենիքի հզորությունը, անկախությունը ու ազատությունը պայմանավորված են յուրաքանչյուրի ինչպես աշխատանքով, այնպես էլ հայրենիքը պաշտպանելու պատրաստակամությամբ;Դա ազգային դպրոցի, ընտանիքի և հասարակության առջև ծառացած գլխավոր խնդիրներից մեկն է, յուրաքանչյուր մանկավարժի, ծնողի ու հասարակության անդամի սրբազան պարտականությունը:

Հայրենասիրությունը աշխատավոր ժողովրդի սերն ու նվիրվածությունն է հայրենիքի, նրա պատվի, ազատության և անկախության համար անձնուրաց պայքարի պատրաստակամությունը, անդուլ հոգատարությունը հայրենի երկրի, ազգի ծաղկման ու բարգավաճման նկատմամբ:Արցախյան ժողովուրդը նախնիների հայրենասիրական, հերոսական ավանդույթները պահպանել է իր հիշողության մեջ, իր սրտի անտես գաղտնարաններում և մարմնավորել ինչպես հեքիաթներում, ավանդույթներում, ավանդազրույցներում, այնպես էլ մյուս ժանրերում:

Արցախյան բանահյուսության հայրենասիրական, հերոսական թեմայով գրված յուրաքանչյուր ստեղծագործություն սերունդներին հայրենասիրության ոգով դաստիարակելու լայն հնարավորություն է ընձեռում:

Հայրենասիրության հիանալի նյութ է «Լուս նան մթեն աշխարքեն» ժողովրդական հեքիաթը:Ժողովուրդը այս հեքիաթում դնում է հերոսությունը, խիզախությունը գնահատելու գաղափարը:Այստեղ ժողովուրդը զարգացնում է այն միտքը, որ ինքը անողոք է նրանց նկատմամբ, ովքեր համարձակվում են հափշտակել ժողովրդական ունեցվածքը, սպանել կամ խոշտանգել իրենց հարազատներին:

Հեքիաթի գլխավոր կերպարը՝ կրտսեր որդին, հետապնդում է իրենց խնձորի գողին՝ քսանօխտը գլխանի, երեսուն օխտը, քառասուն օխտը գլխանի օշափներին, սպանում է նրանց և ազատում գերված աղջիկներին:Այնուհետև տղան շարունակում է իր հերոսական առաքելությունը և կռվում է գյուղի աղբյուրի ջուրը փակող և գեղեցիկ աղջիկներին լափող օշափի դեմ, սպանում նրան, փրկում թագավորի աղջկան և բնակիչներին:

Արցախյան բանավոր ստեղծագործություններում ժողովուրդն իր հերոսների մեջ խտացրել է համեստության գաղափարը:Համեստությունը իսկական հերոսության մշտական ուղեկիցն է:Հեքիաթի հերոսը ազատելով թագավորի աղջկան, չի պարծենում իր կատարածով, նույնիսկ թաքցնում է, իսկ երբ թագավորը իմանում է և ուզում է լավություն անել նա չի ուզում հարստություն, այլ միայն խնդրում է թագավորից օգնել իրեն վերադառնալու իր հայրենի օջախը:Տղայի զենքը նրա կոպալն է:

Դա հայ ժողովրդի հավաքական ուժն է ընդդեմ չարի, հանուն բարության:Ժողովուրդը ուսուցանում է, որ սիրո արժանի է նա, ով հայրենասեր է:Վերջում հերոսը ամուսնանում է քառասունյոթ գլխանի օշափի կողմից գերված աղջկա հետ:Հեքիաթը հարուստ է դաստիարակչական մի շարք գաղափարներով:Դրանց միջոցով ժողովուրդը դաստիարակում է աշխատասիրություն, ազնվություն, անձնվիրություն:Այստեղ դրվատվում են նաև նվիրվածությունը, սխրանքի պատրաստակամությունը և մարդկային այլ առաքինություններ:Հայրենասիրության, ընկերասիրության մեծ օրինակ է «Վըեսկե թասը» հեքիաթը:Տղան վռնդվում է հայրական տնից «բիդասըլ» (ծույլ) լինելու համար և հանձնվում

ղաչաղներին, որոնք նրան փորձում են թե «Բեղմա քու օժըտ նըշանց տաս վեր մեզ հընգեր անինք: Կեսօրեն վախտը ծովեն իրես տեղը մի ըխճկան ծեռք ա տուս կյիլական մին վեսկե թաս շեռքեն, մունք շատընք չըչարվալ կրեցալչընք կըլինք»:Տղան շատ ուժեղ է լինում, նա խլում է ոսկե թասը և հանձնում ղաչաղներին:Նրանք էլ թասը տալիս են թագավորին, որը և բանտարկում է զաչաղներին, ասելով որ թասը գողացված է իր թագավորությունից: Տղան կարողանում է փախչել , բայց նա հոգեկան ծանր ապրումներ է ունենում իր ընկերների համար:Նա ամենաբարդ հոգեվիճակում կարողանում է գտնել ելքը: Իր բոլոր գործողություններում նա ազնիվ է, ընկերասեր, չի դավաճանում իր ընկերներին և խոստանում է նարանց ազատել:Նա մեծ դժվարությամբ անքուն, անհանգիստ գիշերներ է անցկացնում և ի վերջո խլում ,թիլիսիմ ճըպատը երեք հըրեղեն աղջիկներիցե: Նրանք թեկուզ տղայի հակառակորդներն են , բայց և այնպես հիացմունքով են խոսում տղայի ուժի մասին: Հեքիաթի վերջում նա ձեռք է բերում մի քանի ոսկե թասեր և տալով թագավորին, ազատում է իր ղաչաղ ընկերներին:Գեղեցիկ է հեքիաթի վերջը. Եռեք քույրերը ամուսնանում են փոքրը տղայի հետ, իսկ մեծ քույրերը նրա ընկերների հետ:

Հիանալի օրինակներ կարելի է բերել ավանդապատումներից,որոնց միջոցով կարմիր թելի պես անցնում է Արցախ աշխարհը հավերժ պահպանելու, նրա ծաղկումին անմնացորդ նվիրվելու գաղափարը:Միանգամայն ճշմարտացի է նկատել Պ.Սևակը, գրելով. «Ժխտել ավանդույթը նույնն է, ինչ ժառանգականության ժխտումը, որ ոչ միայն հիմարություն է, այլև խելագարություն»:

Արցախի ավանդությունները ձևավոևվել, կազմվել են դարերի ընթացքում:Դրանք ժողովրդի զարգացման պատմական յուրաքանչյուր ժամանակահատվածում հոկվել, ավելի գեղեցկացել են, դարձել ժամանակի պահանջներին համապատասխան:

Գիտամանկավարժական գրականության մեջ իր ուրույն տեղն ունի Արամ Ղանալանյանի «Ավանդապատումը», որի մեջ հեղինակը ավանդությունների գաղափարական բովանդակության մասին գրում է. «Այն արտացոլում է ժողովրդական զանգվածների ձևավոևվող ազգային ինքնագիտակցությունը, օտարերկրյա նվաճողներից հարազատ հայրենիքը պաշտպանելու համաժողովրդական գաղափարը: Նրա գլխավոր հերոսը հանդես է գակիս միաժամանակ և իբրև կոնկրետ անհատականություն, և իբր ժողովրդի հավաքական ամբողջի մարմնավորում, վերջինիս ազգային բնավորության լավագույն հատկանիշների՝ անպարտելի ուժի, իմաստության, ձգտումների ու ակնկալությունների արտահայտիչ»:

Այդ գիրքն ունի ոչ միայն գրականագիտական, մանկավարժական, այլ նաև քաղաքական մեծ նշանակություն:Նշանակալից է նաև ավանդույթների գաղափարական արժեքը:Նրանց մեծ մասի էությունը կազմում է ժողովրդի ստեղծարար ոգու և հավերժության փիլիսոփայությունը, որ դարից-դար հաղորդվել է ավանդախոսների բյուրավոր սերունդների կողմից:

Ավանդույթների հերոսները էպոսի հերոսների նման բնության տարերքի ու հասարակական կյանքի թշնամական ուժերի դեմ ժողովրդի մղած դարավոր մաքառումների անձնավորումներն են , նրա խիզախության, անձնազոհության ու տոկունության կրողները, նրա հոգեբանության ու բնավորության առանձնահատկությաունների խտացումները; Ավանդությունների մեջ դրսևորված է աշխատավոր մարդու առողջ կենսափիլիսոփայությունը՝ աշխատանքի փառաբանության, մարդասիրության, ազատ ու անկաշկանդ ապրելու ձգտում, աներեր հավատ իր անխորտակելի ուժի, վերջնական հաղթանակի և լավագույն ապագայի նկատմամբ;Իրավացիորեն նկատված է, որ ավանդությունների ճանաչողական արժեքը չպետք է որոնել միայն պատմական շոշափելի իրողության արտացոլման հանգամանքի մեջ:Պակաս նշանակություն չունի նաև նրանց մեջ արտահայտություն գտած պատմական զարգացման հարափոփոխ ընթացքի արդյունք տեսական մտածողությունը, որը նույնպես կարող է ստանալ պատմական գիտության համար նշանակալից փաստի ուժ:

Ղարաբաղցին իր բնավորությամբ հերոսական ժողովուրդ է: Նրա ավանդությունները ժողովրդի հերոսական պայքարի, ազատասիրության արտահայտություններն են: Այս

տեսակետից ուշագրավ է ռուս ականավոր բանաստեղծ, հրապարակախոս, հասարակական գործիչ Սերգեյ Գորոդիցկու «Ղարաբաղ» հոդվածը:

«Սյունիքի (այդպես էր կոչվում Ղարաբաղը հնում) իշխանության մելիքությունները հին ժամանակներում բազմիցս են սեփական ուժերով տեղի հողերից քշել թշնամուն:

Աշխարհով մեկ սպռված ղարաբաղցիներին հեշտ է ճանաչել ամենուր:Հայի հին առաքինությունների համակենտրոնացումն են ղարաբաղցի հայի համակրելի հատկանիշները:Ղարաբաղցու առաքինությունները խամրել են պատմության դաժանություններից և զուտ տեսքով պահպանվել Ղարաբաղում:Բարձրահասակ, պնդակազմ ժողովուրդը կյանքը փրկելու համար բարձրանալով լեռները ամրապնդվեց լեռնային օդի ազդեցությամբ և իրեն զերծ պահեց այն վարակներից, որոնք բաժին են ընկնում հովիտների բնակիչներին:

Գործունեության լայն թափ, անձնուրաց քաջություն, կյանքը վտանգելու պատրաստակամություն, ինքնավստահություն, ինքնատիպ համառություն, շիտակ նպատակամտություն, կենցաղի նահապետականություն՝ ահա այդպիսինն է ղարաբաղցին:

Արցախյան բանահյուսության մեջ ընդգծված երևում են ղարաբաղցու բնավորության այն գծերը, որոնք նկատել է ռուս մեծ գրողը:

Կինը արցախցու ընտանիքում հին ժամանակներից ի վեր օջախի մոտ նստած, տնային հոգսերով ծանրաբեռնված մի անձնավորություն է, բայց և այնպես ժողովուրդն իր բանահյուսության մեջ զարգացրել է կնոջ և տղամարդու իրավահավասարության, նաև կնոջ հայրենասիրության, հերոսության անձնազոհության վրեժխնդրության գաղափարները:Այս տեսակետից բավականին հետաքրքիր է ,ստի կնեգելա ինումե հեքիաթը: Այս հեքիաթում մի գեղեցիկ կնոջ սիրահարվում է այդ երկրի վիշապներից մեկը, որը ապանելով կնոջ ամուսնուն ցանկանում է կինը առնել իրեն:Վերջինս իմանալով այդ մասին վրեժխնդիր է լինում գլխատելով վիշապին և նրա ընկերներին:Նա պատճառած չարիքի համար պատրաստ է վրեժխնդրության և անձնազոհության: Գեղեցիկ է հեքիաթի վերջաբանը:Կինը ամուսնու գերեզմանին ասում է «Հանգիստ քոն իլ , թշնամուցտ կլխընեն պիրալում»:

Արցախյան բանահյուսության ժանրերից մեկում՝ ավանդություններում գլխավոր տեղ է գրավում կնոջ հերոսականության թեման:Այդ ժանրի մեջ արտացոլում են գտել պատմական դեպքեր ու դեմքեր, իրական առարկաներ ու երևույթներ, ժողովրդի կենցաղն ու հավատալիքները, նրա ազգային բնավորության առանձնահատկությունները:Կին հերոսի մեջ ժողովուրդը մարմնավորել է հարազատ մայր- հայրենիքը՝ երկրամասը պաշտպանելու գաղափարը:Այստեղ գլխավոր հերոսը հանդես է գալիս միաժամանակ և իբրև կոնկրետ անհատականություն, և իբրև ժողովրդի հավաքական կերպարի մարմնավորում:Այդ հերոսներից նաև ազգային բնավորության լավագույն հատկանիշների՝ անպարտելի ուժի, իմաստության, ձգտումների ու ակնկալությունների արտահայտիչ են:Հայրենասիրության դաստիարակման գործում մեծ նշանակություն ունի բավականին հետքրքիր ,Դեվի առու կամ դեվ արիե ավանդությունը:Այստեղ պատմվում է այն մասին, որ Ղարաբաղի մելիքն ունեցել է մի աննման աղջիկ, որին սիրահարվել են երկու երիտասարդներ:Նրանցից մեկը շատ հարուստ էր, մյուսը քիչ, Դև անունով:Նա պայման է դրել, ով կարողացավ Թարթառ գետից մինչև մոտիկ մարգագետինները ավելի շուտ ջրանցք փորել, ինքը նրան կընտրի:Դևը ջանասիրաբար, մեծ հաճույքով ու նվիրվածությամբ սկսում է աշխատել: Հարուստ տղան չար պառավի թելադրանքով դիմում է խարդավանքի և սավան է փռում ջրանցքի ճանապարհով, կեղծելով, որ արդեն ավարտել է աշխատանքը: Դևը ինքնասպան է լինում, իսկ աղջիկը, իմանալով Դևի մահվան պատճառը հիվանդանում է և մահանում: Մինչև այսօր այդ տարածքը կոչվում է դևի առու:

Հուզիչ է վերջաբանը, նրանց թաղում են իրար մոտ՝ Դևի փորած ջրանցքից ոչ հեռու:Նրանց գերեզմաններից վարդի թփեր են բուսնում, իսկ պառավի գերեզմանից՝ փուշ:Վարդի թփերը ուզում են միանալ, գրկել իրար, բայց փուշը չի թողնում:

Հերոսականության, հայրենասիրության դաստիարակության, միաբանության վառ արտահայտություն է նաև «Կըրխ- կըզ» (Քառասուն աղջիկ) ավանդությունը, որտեղ փառաբանում են քառասուն հայ աղջիկների հերոսությունը, միասնականությունը, ընկերությունը:

«Ասումըն վեր մին կըռեվ տարե քառասուն ախճիգ զորք կազմած կըռվում ըն թշնամուն նհետ, վերջումը բերթ սարքում ետ սարեն յիրա:Ղուշըն ուրան թևավը, օցն ուրան պորտավը կարում չար մուտանա ետ բերթին:Իտիյել ապրումն նահանք ըտեղ շատ էրկան, սարեն անումնել մնումա Կըրխ-կըզ»:

Արցախյան ժողովրդական բանահյուսությունը լայն հնարավորություն է տալիս և փոքրերին, և մեծերին առնչվելու բարու և չարի հետ, մարդու բարոյական ինքնագիտակցության բովանդակության, պարտքի, խղճի, պատասխանատվության, արժանապատվության, մարդու հուզական ապրումների հետ և դրանց ազդեցության ներքո կազմակերպել իրենց անձնական և հասարակակն վարքը:

Մեծ մանկավարժ- դաստիարակ ժողովրդի կողմից զգայական ձևով են ընկալվում բարոյական նորմաները:

Բարոյագիտական իրավիճակներ ստեղծելու մեծ հնարավորություններ ոն ընձեռում բանահյուսության բոլոր ժանրերը:

Այնտեղ, որտեղ խիղճ ու խղճմտանք չեղաավ, տիրում է չարությունը:Արցախահայությունը իր բանահյուսության համարյա բոլոր ժանրերում ցույց է տալիս անհատի արժանապատվության, ազատության և պաշտպանության պահանջը, մարդու երջանկության իրավունքի գաղափարը:Այդ գաղափարի հիմքում ընկած է մարդու հնարավորությունների անսահմանության և նրա կատարելագործվելու ընդունակության մասին համոզմունքը:

Ժողովուրդը մեծարում է մարդկային առաքինությունները:Սերունդներին սովորեցնում է պայքարել մարդկայինարատների դեմ:Ժողովրդի պատկերացմամբ մարդիկ իրավահավասար են:

Բանահյուսության մոջ դրական հերոսը բարության մարմնավորումն է:Նա ոչ միայն մեծ մարդասեր է, աշխատում է նվիրվել բարեկամներին և հայրենակիցներին, այլև մեծահոգի է նույնիսկ իր թշնամիների նկատմամբ:Բարություն սերմանելու ճանապարհին նա դիմում է զոհողության, միևնույն ժամանակ հեգեկան ծանր ապրումներից հետո նա կարողանում է ներել իր թշնամիներին, նույնիսկ կյանք շնորհել նրանց:Դա պատճառաբանվում է նրանով, որ ժողովուրդը մեծահոգի և հոգեկան զգացմունքներով հարուստ է:

Արցախյան ժողովրդական բանահյուսությունը կենսահաստատ ուժ ունի: Թերևս այդ ուժի դաստիարակիչ ազդեցությունն է փոխանցվել սերնդե-սերունդ, դարձել արյան ճիչ, դարձել մաքառելու կամքու վճռականություն: Թերևս արցախյան բանահյուսության բոլոր դարաշրջաններին հատուկ ազատասիրական ոգին է այսօր գոտեպնդում Արցախի ժողովրդին՝ ներշնչելով ապրելու, գոյատևելու մեծ խորհուրդ ու նպատակ:Ժողովուրդը ինքը իր բանահյուսության մեջ վկայում է, որ ազգերի միջև թշնամանք սերմանողները ժողովրդի ոխերիմ թշնամիներն են:

Արցախի ժողովուրդը պաշտում է իր երկրամասը՝ հողը, ջուրը, բնական և կենդանական աշխարհը, հուշարձանները, սրբաքարերը:Դա է ապացուցում այն հանգամանքը, ու արցախյան բանահյուսության մեջ իր ծանրակշիռ տեղն են զբաղեցնում բնապաշտական թեմայով գրված ավանդությունները:Վառ օրինակ է ջրի բուժիչ հանկությունը նկարագրող «Օխնած գյոլ» ավանդությունը :«Օխնած գյոլ»-ը այժմ էլ գտնվում է Ստեփանակերտի շրջանի Սեյդիշեն գյուղի մոտ;Հոսող գետի հատակին կա մի քերծ, ժայռ, իսկ քերծի մեջ էլ ՝ մկրտության ավազանի մեծությամբ ջրով լցված մի քարափոս, որին տեղացիները Օխնած գյոլ են ասում ՝ ջրի սրբազան ու բուժիչ հատկության համար:

Գեղեցիկ է Արցախ աշխարհի բնությունը, դրա վկայությունն է «Զարդարաշեն» ավանդությունը:Զարդարաշենը գտնվում է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանում, որը առաջ կոչվել էր Վերին Թաղավարդ:Ներքին Թաղավարդից տարբերելու համար տեղացիք

որոշում են նոր անուն տալ իրենց գյուղին:Մեկը առաջարկում է դնել Ծմակաշեն, մյուսը Սարի շեն, երրորդը Բարձր: Ըռքեշ անունով մի ծերուկ էլ նայելով շուրջը և տեսնելով , որ գյուղը չորս կողմից զարդարված է ծաղկախ ծառերով ու այգիներով առաջարկում է նրա անունը դնել Զարդարաշեն/:Այդպես էլ անում են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրիգորյան Գր. Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1980
2. Գրիգորյան Մ. Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը, Երևան, 1971
3. Լինիցյան Ետ.Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագարական այնարկ), Հայ ազգագրություն և բանահյուսություն,հ.12, Երևան, 1981
4. Ղազիյան Ա. Հայ ազգագրություն և բանահյուսություն, Հ.15, Արցախ, Երևան, 1983
5. Մախզանյան Հ. Հայ գրականության ուսուցման պատմություն, Ե. 1978

Տեղեկություններ հեղինակի մասին.
էլլադա Բաղդասարյան – ԱրՊՀ Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, մ.գ.դ., Գ.Հ.Հարությունյանը: